

Թալանի վանք

Բենիկ վարդապետը 20-րդ դարասկզբին Էջմիածնի հոգևոր-հասարակական կյանքում որոշակի դեր խաղացած հոգևորականներից է: Էջմիածնի ներքին կյանքին վերաբերող մեկ տասնյակից ավելի գրքերի ու գրքույկների հեղինակ է: Նա անխնա քննադատում է Էջմիածնի ներքին կյանքում տեղ գտած ախտերը ու հորդորում գտնել դրանց լուծման արդյունավետ ուղիները: Խորհրդային կարգերի հաստատումից հետո Հայր Բենիկն անդամակցել է «Ազատ եկեղեցի» շարժմանը: Կարգալույծ է եղել Գևորգ Ե Սուրենյանցի հատուկ կոնդակով:

Հա՛յ ժողովուրդ,

Հայ և օտար թագավորներ, հայ ունևորն ու աղքատը, մշակն ու գյուղացին էն հին օրերից հայոց եկեղեցուն կալվածներ են փեշքեշ արել, հավատքով ոսկի ու արծաթ, գոհար ու մարգարիտ թափել Էջմիածին, որ սա հայ ազգի մեջ ուսում տարածի, Քրիստոսի սերն ու Ավետարանը քարոզի, որք ու աղքատ պահի, ազգօգուտ գործեր անի: Եղել է մի ժամանակ, որ նա իր պարտքը կատարել է, ինչպես որ հասկացել է. և հայը սիրել է այդ եկեղեցին: Այժմ եդպես չի. այժմ հայ ժողովուրդը երես է թեքել և զզվում է հոգևորականից: Իրավունք ունի՞, թե՞ չէ: Ես ասում եմ, որ իրավունք ունի: Ինչո՞ւ. որովհետև դարերի դիզածը մենք թալանում ենք և կրթականնք, քանի որ դու քնած ես, համր ես, կույր ես: Փաստե՞ր ես ուզում, հրամմե, տես:

120,000 դեսետին ընտիր հողեր ու անտառներ ունեինք, 5 սեփական մեծ գյուղ, հսկայական կալվածներ՝ շենքեր բոլոր խոշոր քաղաքներում, մանավանդ Քիշնևում: Կայսերական տնից հետո առաջին կալվածատերն էինք ամբողջ Ռուսաստանում: Այդ կալվածներով ինչ նյութական ու բարոյական վերաշինություն արինք քեզ համար, մեկն աչքս կոխիր. ոչի՛նչ, ոչի՛նչ: Այդ կալվածները մասամբ անշնորհք տիրապետությունից այս ու այն էին ուսում. մասամբ անմշակ մնալով խոպանացան, եկած արդյունքն էլ կերան առաջնորդներն ու իրենց բարեկամները, սինողի անդամներն ու իրենց մերձավորները:

Բացի այդ, ազգը խոշոր կտակներ էր անում. ախր մի հարցրու, թե էդ կտակների գումարները ի՞նչ արինք մենք, ի՞նչի վրա գործադրեցինք: Բա պտղին ու խաչահամբույրը, հոգեբաժինն ու պսակադրամը, լուսագինն ու նվերները, ուխտատեղիներն ու մոմագինը, կամավոր ընծաներն ու մատաղները, գավառներից շարան-շարան սայլերով եկող յուղն ու պանիրը... Ես ո՞րն ասեմ: Ախր Էջմիածինը դարերով ազգի գանձարանն է եղել, հարստության պահեստատունը, որ գործ անենք ազգի համար: Մի ասա, արևդ սիրես, ի՞նչ ես ստացել մեզնից՝ բարոյական, մտավոր, նյութական, կրոնական: Ոչի՛նչ, ոչի՛նչ:

Դպրոցները ժողովուրդն էր պահում, բարեգործական հաստատությունները՝ նույնպես: Ճեմարանը, որ դրամ հավաքելու մի խաբկանք էր, իր դրամագլուխն ուներ: Ուրեմն ի՞նչ ենք տվել քեզ. ոչի՛նչ, ոչի՛նչ: Ահա էս դրությունն էր պատճառը, որ Նիկոլայ թագավորը, որ հովանավորում էր եկեղեցին, իր քաղաքական նպատակներին ծառայեցնելու համար, ասաց. «Աղբեր, էսքան հող ու հարստություն տվել ենք Էջմիածնին, շներոց գելերոց է լինում, լավ է զավթեմ, ինքս լափեմ»: Առավ. ցույցեր արինք, բանտերում տանջվեցինք, արքորներում

մաշվեցինք, աղերսեցինք ազգի անունով հետ առանք: Բայց էլի են ջուրը, էլի են ջրաղացը. կարգի չընկանք:

Էջմիածինը իր ավանդական գործն էր կատարում և իր կատարածը իր նշանաբանով ծածկում. «ծածկել գարշանքը» («ծածկել զգարշելիս»): Բայց Էջմիածնի գարշահոտությունը, որ մի խումբ վանականների ձեռքով ավելի խորացավ և «Գերագույն Խորհրդով» պսակվեց, էլ չի ծածկվի. գարշահոտությունը այժմ ուղեղ է ծակում և հիվանդաբեր է, չպետք է ծածկվի: Եվ ահա ծածկոցը պատռում ենք:

Էջմիածինը պահանջում է, որ ամեն մի գյուղի կամ քաղաքի եկեղեցի տարեկան էլ և մուտքի հաշիվ տա իր ծխին և հոգևոր վարչության. բարի: Ամբողջ հավատացյալ հայ ժողովուրդն էլ Էջմիածնի ծուխն է. Էջմիածինը ինչո՞ւ հաշիվ չի տալիս ազգին, թե ի՞նչ ունի, ի՞նչ է ստանում, ինչո՞ւ, որքա՞ն և ինչպե՞ս է ծախսում: Ինչո՞ւ Էջմիածնի տնտեսությունը, ինչպես և գործունեությունը հավիտենական գաղտնիք մնա այդ ազգից և միշտ էլ ձեռք մեկնի, թե՛ տվեք, հա տվեք:

Էջմիածնի ղեկավարները հաշիվ թող տան. ի՞նչ եղավ վանքի 1500 պղնձեղենը, ո՞ւր է հին ցուցակը: Ի՞նչ եղան չինետան հազվագյուտ թանգարժեք չինիները. ո՞ւր է ինվենտարը: Ի՞նչ եղան Խրիմյանի ստացած ընծաներն ազգից: Ի՞նչ եղան ներքին գանձարանի արծաթեղեն ու ոսկեղեն իրերը: Ո՞ւր է հին ինվենտարը: Ի՞նչ եղան Սուքիաս արքեպիսկոպոսի բոլոր միաբաններին կտակած առանձին առանձին արծաթեղեն ու ոսկեղեն իրերը: Ի՞նչ եղան Ավետիք Ղուկասյանի ոսկեղեն և արծաթեղեն ահագին իրերը, որ Մատթեոս եպիսկոպոսը Թիֆլիսից բերեց. ո՞ւր է ցուցակը Խունունցի ստորագրությամբ: Ի՞նչ եղան հյուրատան հարյուրավոր մահճակալները իրենց մաքուր անկողիններով, սպիտակեղենով և արդ ու զարդով. ո՞ւր է ինվենտարը: Ի՞նչ եղան կտակների գումարները. ունի՞ն ցուցակ. կա՞ն կտակագրերը: Ի՞նչ եղավ Ճեմարանի անձեռնմխելի դրամագլուխը. եթե ծախսված է, ի՞նչ իրավունքով: Ի՞նչ եղան Ճեմարանի 200 երկաթե մահճակալները, մոտ 300 անկողիններով, անբավ սպիտակեղենով, մի քանի հարյուր ափսեներով, դանակ, պատառաքաղ, գդալներով, սեղաններով, կահկարասիքով, հսկայական հայելիներով. սամովարներով, պղնձեղենով և այլն:

Այս և սրանց նման շատ բանից շատերը տեղեկություն չունին: Չունիմ և ես, չունիս և դու, հայ ժողովուրդ: Այդ մթություն է. մի գաղտնիք միայն սինոդականների, իսկ այժմ Գերագույն Խորհրդի բանալիներով կողպած: Ի՞նչ ոսկով և որքանո՞վ այս տարի իբր թե նորոգեցին մայր տաճարի կտուրը. և ո՞վ գիտե, թե հեռավոր հայության ի՞նչպիսի «հսկայական նորոգության» զեկուցումն արին: Ի՞նչ ոսկի էր, որտեղի՞ց է, որ ստացվում և ռճիկ է տրվում միաբաններին: Որքա՞ն է ստացվել և որքա՞ն բաժանվել: Որտեղի՞ց, ի՞նչ եկամտով է ուտում, հագնում, ապրում միաբանությունը: Որքա՞ն են ստանում, որքա՞ն բաժանում: Որքա՞ն հագուստի կտորեղեն, թել, կոճակ, սապոն, սանր, մկրատ, կոշիկ և այլն ստացվել է մինչև օրս արտասահմանի և Ռուսաստանի հայությունից և որքա՞ն բաժանվել: Ի՞նչ եղավ «Եղբայրական օգնության» ահագին գույքը, ո՞ւր է ինվենտարը: Ի՞նչ եղավ վանքի 85 տակառ ցեմենտը: Ի՞նչ եղան մեր հանդերձատան կտորեղենը, մահուղները, անոթեղենը. ո՞ւր են ցուցակները: Ի՞նչ եղան մեր խոշոր վայրուտան՝ Էջմիածնի գորգերը. որքա՞ն էին, որքա՞ն կան և նույնությա՞մբ կան. ո՞ւր են հին ու նոր ցուցակները: Ի՞նչ եղան մեր պահեստները. կա՞ ինվենտար, ինչպե՞ս է ծախսվել: Ի՞նչ եղան մեր հարուստ գինետան հին գինիները. կա՞ կանոնավոր մատյան

հաշվետվության: Ի՞նչ եղան և ի՞նչ են լինում Մայր տաճարի գույքը. ո՞ր են բոլոր հին ու նոր մատյանները, որ տեսնենք ի՞նչ է եղել և ի՞նչ է մնացել:

Էսպիսի հարցեր տուր, հայ ժողովուրդ, քո կարողության «պահապան հրեշտակներին» և պատասխան ստացիր. հաշիվ պահանջիր, ա՛յ ջրատար հայ հավատացյալ, որ քեզ սիրով կողոպտել ու Աթոռին ես տվել. տեսնենք տվածդ ազգի բարեկեցության, լուսավորության վրա՞ է ծախսված, թե՞ ոչ: Էս քո հաշիվների համար մենք մի քանի ընկերներով շատ ենք հալածվել գողերից, ա՛յ ժողովուրդ, էդ իմացիր դու:

Մի մեռած արքեպիսկոպոս, որ Ճեմարանի տեսուչ էր (Ժառանգավորաց երկդասյան ուսումնարանից), Ճեմարանից բաներ էր գողանում ու իր բնակարանը դրկում. դեռ սարկավագ էինք: Գարեգին սարկավագը՝ ավագ վերակացուն, բողոքեց. «Յա՛, ես եպիսկոպոս, դու սարկավագ, կարա՞ս ըլնես ինձի հակառակ» կանչեց էդ ջոջ աղեն և հետևյալ օրը մեզ ընկերներով Ճեմարանից վանք քշեցին: Ահա էս է Էջմիածնի մտայնությունը, հոգևոր փաշաների մտածելակերպը: Որ այդ հաշվետվության տակից Էջմիածնի ջոջերը չեն կարող դուրս գալ, էդ ես համոզված եմ. փաստերը քեզ էլ կհամոզեն:

Հուսիկ արքեպիսկոպոսը Քիշնի կավածքից գողացել էր 40,000 ռուբլի. քննեցի, ապացուցեցի: Մինոդի անդամները՝ Մեսրոբ, Մատթեոս, Բարգեն, պաշտպանեցին գողին, գողոնքը քարին քսեցին: Այս մասին կարդա իմ «Էջմիածնի արդարություն» գրքույկը և «Անարդարության երեսից»:

Մարցի կավածներից գողացված էր 35,000 ռ. փայտ և տախտակ. գողությունը բռնեցի Դսեղ գյուղում և անտառի մեջ. դատի տվի գող կառավարչին, վոր Թիֆլիսի առաջնորդ Մեսրոբ եպիսկոպոսի բարեկամն էր. գործը քարին քսեցին:

Կորյուն եպիսկոպոսը 372 փ. աղ էր ծախել գողունի. քարին քսեցին:

Վարդան վարդապետը հանդերձատնից գողացել էր թոփով կտորներ, թավիշ, դյուժիններով դանակ, պատառաքաղ, սապոն, մի խուրձ պատրույգ, ցորեն և այլն: Իբրև վերստուգիչ քննիչ, զեկուցել եմ ժամանակին վանական ջոջերին. քարին քսեցին:

Զավեն եպիսկոպոսը, այս մասնագետ թալանչին, կերել է Հոփսիմեի վանքի մոտ 11 խավար ցորենը, գարին, Անդրանիկի վանքին նվիրած ոչխարները, կովերը, ձին և շատ գույք: Վանական խորհուրդը ինձ՝ վերստուգչիս առաջարկեց քննել այդ գործը. սկսեցի, ինչ սիլի-բիլի արին Զավենի հետ, չգիտեմ: Բանավոր կերպով քննությունը դադարեցնել տվին. քարին քսեցին: Զավեն եպիսկոպոսը, օգտվելով վերջին հեղաշրջումից, թալանել է վանքի այն բնակարանների գույքը, որոնց մեջ խորհրդային պաշտոնյաներն էին ապրում. ահագին քանակությամբ գորգեր, անկողիններ, սամավարներ, չեմոդաններ և զգել էր անմեղ սասունցիների վրա: Զավենի ասելով տանելիս տեսել է Բարդուղիմեոս եպիսկոպոսը, որի մեծ գորգը վերջերս բռնվեց Զավենի մոտ. նրա մոտ բռնվեց և Գարեգին եպիսկոպոսի գորգը: Էս գույքի գործը բացել է Մեսրոբ եպիսկոպոսը ինձ հայտնելով և Եղիշե վարդապետը, որ ափսոս մեռավ: Պաշտոնական գրով դիմել եմ միաբանության ժողովին իբրև վանական կառավարության նախագահ և պահանջել, որ գողոնքը հետ պահանջվի: Բանից դուրս եկավ, որ գործ բաց անող Մեսրոբն այդ ժամանակ Զավենի հետ բանակցության մեջ էր և Գերագույն Խորհուրդ էին դարբնում: Գործը քարին քսեցին: Հայ-թրքական աղետի օրերին Զավենը

Բազմում 2000 ռուբլի փող էր հավաքել Երևանի առաջնորդին դրկելու վնասված հայերի համար: Պահանջեցին, «Հովտի» մեջ էլ գրեցին, թե՛ տո՛ւր, ա՛յ մարդ, ամո՛թ է: Չավենը քարին քսեց: Խեղճ Գարեգին եպիսկոպոսի դասախոսությանց փողերը Բազմում հավաքեց, կերավ. աշխատեց Գարեգինը, կուլ տվեց Չավենը: Նույն Չավենը գինետնից 40 վեդրո գինի, տասնյակ վեդրո օղի է քաշել այս ու այն պատրվակով և մոմենտներից օգտվելով՝ զցել կա՛մ զինվորների, կա՛մ սասունցոց վրա: Ախար էս էլ մի առանձին քաջություն է, եպիսկոպոսական քաջություն, հանցանք գործել՝ մեկ, անմեղի վիզը փաթաթել՝ երկու: Էսպես է կազմված էդ եպիսկոպոսի խիղճը:

Վանական կառավարության նախագահ եղած Ժամանակը 3 խավվար ցորեն է յուրացրել վանական կառավարության քարտուղարը. ժողովում պատասխանատվությունը զցեցին նախագահի վրա. որպես նախագահը խորհուրդ տվեց քարտուղարին հանձն առնել տալ: Խոստացավ քարտուղարն ասել «ի՞նչ անեմ, թե՛ բերանս բանամ» ու չբացեց. հաստատ համոզված լինելով անշուշտ, որ Չավենը կօգնի, որ քարին քսեն: Էդպես էլ եղավ: Նույն Չավենի վրա պարտք կա ժողովով դրված 16 փուր հաց, մի սաժեն փայտ, բացակա վարդապետի մոտ մի տարվա հացը. այս ամենը տարել է ապօրինաբար և ... մարսեց: Բավական է սրա մասին, կարծեմ ընթերցող գլուխդ արդեն պտույտ եկավ, սիրտդ խառնեց:

Տիրայր եպիսկոպոս: Ո՛, սա արիստոկրատ է, գողությունն էլ արիստոկրատական: Հավատավոր նախիջևանցիները Էջմիածին ուղարկել էյին 1919 թվին սրբազան անոթներ՝ սկիհ, մաղզմա, մասնատուփ, խաչեր 32 կտոր, մի փուր արծաթ ոսկեջուր հարստություն արկղով. ազդեցիկ դիվանապետ էր, գողացավ, կերավ, բացվեց: Եպիսկոպոսական դատ եղավ. ծիծաղելի դատ. որոշեցին 15,000 ռուբլի կովկասյան բոն առնել. այսինքն մի քանի մանեթ ոսկով, բայց սիրտն էլ շահելու համար Ամերիկայի թեմի առաջնորդ նշանակեցին:

Ա՛յ հավատավոր ժողովուրդ, եպիսկոպոսները որ իրենց սրբությունները գողանան, ծախեն, էլ ի՞նչ չեն գողանա. ախր տանելո՞ւ բան է այս. էսպես անպատիժ շահատակություն և սրբապղծություն կլինի՞:

Նույն եպիսկոպոսը ներքին գանձարանից վերցրել է մի արծաթե սուպնիկ, մի արծաթե շերեփ, 12 հատ արծաթե սեղանի գդալ, 12 հատ նման թեյի գդալ, էլ էս ինչ գիտեմ՝ ինչ. չե՞ս հավատում, Մուշե եպիսկոպոսի քննադատականը պահանջիր, կարդա:

Տաճարի բազմափակ խորանից թանգարժեք խաչեր ու մետաքսե շուրջառներ գողացվեցան. վերջիններս բռնվեցան Ջահվարապատ գյուղում երեխաների վրա որպես բլուզ. կտորները տաճարում: Գողությունը ձգեցին մի անմեղ վարդապետի վրա, որ բացակա էր Էջմիածնից: Մահվան անկողնում միայն անմեղին գրպարտող մի վարդապետ խոստովանեց. զղջաց, որ ինքն է արել և արտասվելով ներողություն խնդրեց անմեղից ու մեռավ:

Մոսկալի ավերածություն եմ բռնել էս 20 թվին (երբ վերստուգեցի) տաճարի թանգարանում. նկարագրել անսահման կորուստը, զեկուցել եմ կծու լեզվով և՛ վանական խորհրդին, և՛ Վեհափառ Կաթողիկոսին: Ի՞նչ արին. զայրացան, որ կծու լեզվով եմ գրել ու ... քսեցին քարերին:

Մատթեոս եպիսկոպոսը կերել է եղբայրական օգնության կառքը, մի քանի տասնյակ տակաոց մենտ, մութն է թողել եղբայրական օգնության 10,000 ռ., յուրացրել է ահագին գույք (տես

Մինողի գործերը 1912 թ. № 57-սեղանի գիրք – 1908 թ. № 12, 1916 թ. № 7, 1915 թ. № 39, 1915 թ. № 37): Այս գործը բացել է Ջավենը (Մինողի հողվածները ես եմ տվել) միաբանական ժողովի պաշտոնական նիստերում գրավոր ու բանավոր, երբ Մատթեոսն էլ Ջավենին էր մերկացնում. իրար անվանում էին «սրիկա, փողոցային, գող թալանչի»: Ինձ մնում էր նույն ժողովում բացականչել՝ «բրավո՛», երկուսդ էլ իրար արժեք:

Ասա՛, հա՛յ ժողովուրդ, էս եպիսկոպոսություն է: Այս բոլորից հետո ի՞նչ արին. գողոնքը Մատթեոսի շալակը դրին, որպես օժիտ ու բարձրացրին Բագվի առաջնորդական աթոռը: Նույն այս մարդը երկու ոսկե ժամացույց է հանել գանձարանից, մինը Ռաֆֆու ժամացույցը, որի կինը վիպասանի մահվանից հետո Էջմիածնի թանգարանին էր բերել նվեր վիպասանի հիշատակին:

Ջավենին մրցակից է Արիստակես վարդապետը, մի տգետ մարդ, բայց մի ճարպիկ գող: Արտաքինով «սուրբ», չափազանց ժամասեր, Գյուտ եպիսկոպոսի հատուկ հովանավորյալը: Սա Ապարանում ահագին քանակությամբ բուրդ է գնել պակաս գնով վանքի համար, իսկ վանքից ստացել շատ ավելին: Բռնվել է խավարներով ցորենի գողության մեջ, որ հանել են նրա տնից և փոխադրել վանք: Ուղտերի բեռներով Չոբանքարի թուրքերին գողունի ցորեն է ծախել կալից: Գիշերը բեռնած ուղտերին են բռնել: Եղբայրական օգնության մոտ 10,000 թալանի ոչխարի մեծ մասը կերել է: Սևանի վանքից գողացել-փախել էր վանքի արծաթեղենը: Իբրև կաթնատան կառավարիչ՝ նա 1923 թ. վանքին տվել է 5 մատակից, 40 ոչխարից, 18 կովից միայն 12 փ. կարագ:

Ա՛յ գյուղացի, հա՛յ գյուղացի, ախր դու գիտես, որ 12 փ. կարագը կտան միայն 3 մատակը. մնացածն ի՞նչ եղավ: Այս բոլորը քսեց քարերին, միշտ անպատիժ և Գյուտ եպիսկոպոսի հովանավորությամբ միշտ վանական կառավարության մեջ: Այս ամենը և ավելի խայտառակը սրա մասին կարելի է իմանալ Մուշե եպիսկոպոսի պաշտոնական քննադատականից: Թալանված է ճեմարանի կահկարասին, պատի հսկայական հայելիները, Հռիփսիմեի վանքի 20 խավար հացահատիկը, 90 վեդրո գինին, գանձարան ձգված կանխիկ դրամը, Հռիփսիմեի թանգարժեք մախմար վարագույրը, վանքից գյուղ տարված կարասին ու անոթեղենը: Այս գործերը կատարել է Արսեն վարդապետը, Մեսրոբ, Բագրատ, Մատթեոս եպիսկոպոսների մտերիմ ընկերն ու հովանավորյալը: Այդ գործերը բաց է արել Արտակ վարդապետը (այժմ Ջանգեզուրի եպիսկոպոս) 1922 թ. հունվ. 11 թվակիր պաշտոնական թղթով հանուն միաբանական ժողովի: Ի՞նչ արին. քարին քսեցին: Արտակ վարդապետը իր փաստալի զեկուցումը վերջացնում է այս խոսքերով. «Վանական քննիչները (Մատթեոսն էր) միշտ անձնական հաշիվներ են մաքրել և մժղուկները քամելով՝ ուղտեր են կլանել»:

Ավերված տաճկական Հայաստանի հայ ժողովուրդը, եկեղեցականները իրենց տուն ու տեղը, գույքն ու սիրելիներին կորցնելով, անկորուստ, գրկով բերին հասցրին Էջմիածին իրենց տաճարների ու վանքերի հարստությունն ու սրբությունների զգեստներ, թագեր, սաղավարդներ, խաչեր, սկիհներ, մատանիներ, խալիներ և այլն: Մի՛ հարցրեք Էջմիածնի ջոջերին՝ ի՞նչ ցուցակով ստացաք, ո՞ւր են ցուցակները, ի՞նչն է մնացել:

Լիմ անապատի Հովհաննես վարդապետը 18 թվականին իր անձի վտանգով անապատի հարուստ գույքը ազատել և բերել է մանրամասն ցուցակով հանձնել Էջմիածնին: Մի ամիս առաջ (այս տարի) Բաղդատից եկել էր գաղթականներին մեր երկիրը փոխադրելու գործերով,

ներկայանում է Գերագույն Խորհրդի ավագ Մեսրոբ արքեպիսկոպոսին, խնդրում է իր բերած իրերը իր ցուցակով ստուգել և իրեն ապահովագիր տալ իր ժողովրդի առջև պարզերես մնալու: Ցուցակը կորել է. համառոտ մի ցուցակ են ներկայացնում, որի մեջ չկան թանգարժեք խաչեր, մատանիներ, պնակներ: Աղերսում է, թե իմ ցուցակը տվեք: Մեսրոբ եպիսկոպոսը անպատվում է մարդուն, սպառնում, թե դու ո՞վ ես, որ համարձակվում ես մեզնից հաշիվ պահանջել: Խեղճ մարդը մոկտալով քաշվեց գնաց իր Բաղդադը, երևի հաշիվ տալու, թե ովքեր են նստել Էջմիածնում:

Էսքանը բավական են համարում. էս պատկերը ամեն տարի կրկնվող պատկեր է: Ախր Էջմիածինը հարստության ծով լիներ, կցամաքեր, սար լիներ կհալչեր էս աղտեղի ճանապարհով: Ախր էդ հարստությունով կարելի էր կրթական, գիտական, բարեգործական մեծ գործ անել, երկիրը վերաշինել, գոնե վանքերը կործանումից փրկել: Բայց ո՛չ այս և ո՛չ այն:

Այսպես տարիներով թալանվում է Էջմիածինը, հավատարիմ մնալով իր նշանաբանին՝ «ծածկել զգարշելիս»: Ծածկելու ճանապարհներն էլ էնքան շատ են, որքան շատ են գողերը: Մեկն ասեմ: Ժամանակով վանքի ագարակի կառավարիչ էր ոմն Մամբրե վարդապետ. ազդեցիկ եպիսկոպոսները սրանից ծածկաբար խոզ էին ուզում, գառ, փթերով յուղ և այլն: Ի՞նչ աներ Մամբրեն. էլից մատյանի մեջ անհայտացած գառների, արջառների, ոչխարի դիմացը գրում էր՝ «շունք կերին», «գայլք կերին»: Եվ սինոդում հաշվեմատյան ստուգողներն ու «գայլերը» իրար երեսին նայում, ժպտում էին, մատյանը հաստատում և գովում իմաստուն վարդապետին, որ կարողանում էր «ծածկել զգարշելիս»:

Էս բոլորից հետո դեռ համարձակվում են աշխարհ լցնել, թե մենք սոված ենք. սուտ է, մենք երբեք սոված չենք եղել, թեպետ արժանի ենք, որ սոված մնայինք: Մի փոքրիկ հաշիվ տամ քեզ, հա՛յ ժողովուրդ. Էջմիածնում 16 «միաբան» կա. էդ 16 միաբանը մի տարում կերել է 57 ոչխար, 18 տավար՝ կով ու եգ: Էդ համեմատությամբ էլ գնա բրինձ, յուղ, լոբի, չիր, միրգ, ձուկ, կարտոֆիլ, կաղամբ և բոլոր մթերքներն ինչ որ գործ է դրվում կերակուրների մեջ: Վանական սեղանի վրա ամեն օր չորս տեսակ միայն նախաճաշ ենք ունեցել, կատլետ, ձուկ, նույնիսկ դոշ, լոբի, մածուն, կարագ, ձու, դալ, դաուրմա, թթվեղեն, միրգ և այլն. նախաճաշին անմիջապես հաջորդել է երկու տեսակ մսեղեն և յուղային կերակուր, որոնց վրայից խմել ենք անուշ գինին: Տարվա մեջ ոչ մի օր պաս չենք պահել, բայց մեծ պասին մեր քարոզիչները փոր էին պատռում բեմերի վրա, թե՛ ապաշխարեցե՛ք, պասի օրեր են, պահեցե՛ք, որ փրկվեք և այլն: Ասա՛ խնդրեմ, հա՛յ ժողովուրդ, էսքան սուտն ու կեղծիքը ինչպե՞ս կարող է տեղավորվել Քրիստոսի աշակերտի հոգու մեջ: Մի՞ թե սա անարգանք չէ Ավետարանի աննման վարդապետի հիշատակին:

Էջմիածնի ձեռքում կա այժմ երկու ջրաղաց 7 աչքով, տարեկան վաստակ է բերում 100-120 խալվար հաց: Ուրեմն 16 միաբանը հացով շատ ապահով են: Ունենք 44 դեսյատին ընտիր այգի (կարծեմ բացի Փարաքարինը): Եթե այդ այգիները լավ մշակվեն, իմ հաշվով տարեկան 20,000 վեդրո գինի կը տան: Ունենք 40 դեսյատին էլ վարելահող: Ի՞նչ էս կարծում, հա՛յ ժողովուրդ, եթե մենք անձամբ մշակենք (ինչ բարձր վայելչություն է բահն ու գրիչը, գիրքն ու մաճը փոխեփոխ ձեռք առնել), 16 հոգիս էլ քաղցած կմնանք: Ախր ուրիշ ի՞նչ գործ ունենք, բացի ինտրիգներից:

Հա՛յ ժողովուրդ, ես ձեզ ասացի ճշմարիտը, եթե ազգ ես, եթե սրտացավ ես, չես լռի, իսկ եթե կլռես, չես գա դատ անելու, կնշանակե քեզ արժանի «սուրբ հայրերը» հենց էդ եպիսկոպոսներն են , որ կան՝ բարով վայելեք իրար:

Ես պարտքս կատարել եմ աստիճանաբար, Քրիստոսի պատվերի համաձայն. նախ զգուշացրել եմ գողերին, հետո գրել եմ վանական ջոջերին, հետո ջղայնացած, խոստովանում եմ, կծու լեզվով բազմաթիվ զեկուցումներով զեկուցել Վեհափառ կաթողիկոսին. գրել եմ նույնիսկ, թե ճար արե՛ք, Վեհափառ տեր, Էջմիածնում շատ քիչ բացառությամբ քրեական հանցագործների մի խումբ է նստած: Եվ որովհետև ոչինչ չեղավ, ընդհակառակն, թալանչիները քաջալերվեցան, եպիսկոպոս, առաջնորդ եղան, «գերագույն» սարքեցին, բարձր պաշտոններով վարձատրվեցին, ինձ մնում էր վերջին պարտքս կատարել. զեկուցանել հայ ժողովրդին, որ վերին տերն ու տնօրենն է իր եկեղեցուն. հենց ինքը կենդանի եկեղեցի է: Եթե կամենում ես ասածներս ստուգել, ահա քեզ ցույց տամ պաշտոնական աղբյուրները:

«Վանակական Խորհրդի» բոլոր արձանագրությունները 1919 թ. սկսած. միաբանական ժողովների բոլոր արձանագրությունները նույն թվից. Սինոդի վերոհիշյալ գործերը. ազնիվ Մուշե եպիսկոպոսի փաստացի ու մեծ քննադատականը՝ Արտակ եպիսկոպոսի վերոհիշյալ զեկուցումները, Ջավեն եպիսկոպոսի բողոքներն ու Մատթեոս եպիսկոպոսի բացատրությունները. իմ վերստուգչական և նախագահական զեկուցումները Խորհրդին, միաբանական ժողովին, Վեհափառ կաթողիկոսին, կտակագրերը և բոլոր հաստատությունների հին ինվենտարները: Այդ տեղերում դու ավելի կգտնես. իմ տվյալները թեթևակի են և համառոտ:

Իսկ եթե «սուրբ գողերը» կոչնչացնեն այդ բոլորը (իսկ այդ բանին ընդունակ են, որովհետև Հոփսիսիմեի գույքի ցուցակը ես եմ կազմել իբրև վերստուգիչ և ինձ հետ ստորագրել է Վարդան վարդապետը, չգտա գործերում, որից հետո ամեն ինչ կորավ), այդ կլինի «գողություն գողությանց»: Մի դեպք էլ հիշեմ «Գերագույն Խորհրդի» փոքրագությունից. Վեհափառը վանական կառավարության (որի նախագահն էի 1923 թ.) հրամայել էր, որ շաթիրին մի տարվա ռոճիկ տանք 120 ռուբլի, որ չէր ստացել ըստ Վեհի վկայության: Կատարեցի հրամանը: Գերագույն Խորհրդի անդամները, որ էդ ժամանակ արդեն խռովել էին կաթողիկոսից և «գերագույն» կազմելու գաղտնի գործն էին սկսել, պահանջեցին, որ էդ փողը ետ առնվի, թե կաթողիկոսը ճիշտ չի ասել. օրակարգի նյութ շինեցին, կաթողիկոսին ստախոս դուրս բերին և այն աստիճանի վիրավորեցին, որ կաթողիկոսը կարգադրեց այդ գումարը իր ռոճիկից բռնեն երեք նվագում: Այդ փոքրոգի վարմունքի դեմ ես թղթով բողոքեցի, խնդրեցի չարձանագրել, հիշեցրի, որ իրենցից ոմանք հազարներ են կերել, ինչո՞ւ ետ չեն տալիս և այդ 120 ռուբլու շուրջը փոթորիկ են հանում իրենց կաթողիկոսին անպատվելով, գոնե առանց արձանագրության ետ առնեն: Բայց խոսքս չանցավ:

Գիտե՞ս ինչ կա, հա՛յ ժողովուրդ. առաջ Էջմիածնի գույքի վրա հսկող պրոկուրոր կար՝ էլի մի սանձ էր: Մենք տրտնջում էինք, որ պետության ներկայացուցիչը կանգնած է մեր գլխին, մուրճը ձեռին. բողոքում էինք, որ ազատ եկեղեցին բռնության տակ է: Հիմա էլ ոչ ոք չկա հսկող. եկեղեցին ազատ է, բայց թալանվում է՝ իր եկեղեցականների ձեռքով: Հիմի ի՞նչ անենք. քրեական հանցանքներ են կատարվում. ո՞վ պիտի հոգա այդ մասին: Միայն դո՞ւ. թե՞ դու էլ լռես, ամեն ինչ վերջացավ... Հավաքվի՛ր, արի՛, սիրելի՛ ժողովուրդ, եկեղեցու վիճակը տես, աչք անձի թալանի վանքը, որ աղաղակես: Թող կորչին թալանչիները. Թող կորչին գողերը. Թող

կորչին կեղծարարները. Թող կորչին բռնացողները և Թող վերականգնի մեր եկեղեցին մեր Ավետարանի հիմունքով:

Դո՛ւք էլ չպետք է լռեք, սիրելի՛ ընկերներ, որ ինձ մենակ թողիք գեհենի մեջ, Էջմիածնի փշությունից հեռացած նախկին վանականներ: Դո՛ւք էլ ինձ պես համոզված էք, որ Քրիստոսը միայն սոցիալական պարտաճանաչության կրոն է ստեղծել, սիրո պսակով. ձեր ազգի սերը պահում է ձեզնից, որ չլռեք բարոյական այս անկման հանդեպ: Դո՛ւք էլ չպետք է լռեք եկեղեցու բյուրոկրատիայից խեղդված, կողոպտված, սովալլուկ քահանաներ, եթե ձեր մեջ վառ է մնացել ժողովրդասիրության, ճշմարտության և արդարասիրության բոցավառ կայծը: Ձա՛յն հանեցեք, գրեցե՛ք, խոսեցե՛ք, մի՛ վախենաք ոչ ոքից, եթե ձեզ սիրում է ձեր ժողովուրդը: Բոլորդ միասին եկե՛ք «ձեր մորն այցելության» և փրկեցե՛ք ավազակների ձեռքից:

Բենիկ Ծ. Վարդապետ

Երևան 1924